

# ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔ

22.08.2014

ՀՀ Կոտայքի մարզպետ Ա. Հարությունյանն աշխատանքային այցելությամբ եղել է մարզի Նոր Արտամետ համայնքում:

Համայնքի ղեկավար Յու. Հովհաննիսյանի ուղեկցությամբ Կոտայքի մարզպետը ծանոթացել է գյուղի ենթակառուցվածքների գործունեությանն ու համայնքի բնակիչների առօրյային:

Այցելության շրջանակներում Ա. Հարությունյանը շրջայց է կատարել տեղի միջնակարգ դպրոցում, ծանոթացել շենքային պայմաններին, զրուցել մանկավարժների հետ՝ լսելով վերջիններիս մտահոգող խնդիրներն ու Նոր ուսումնական տարվա մեկնարկի կապակցությամբ տարվող աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու վերաբերյալ առաջարկությունները:

Նոր Արտամետի միջնակարգ դպրոցի պատասխանատուներին Կոտայքի մարզպետը հանձնարարել է ձեռնարկել առավել հետևողական մոտեցումներ ուսումնադաստիարակչական աշխատանքները կրթական բարեփոխումների ոգուն և տրամաբանությանը համապատասխան կազմակերպելու նկատառումներով:

Այնուհետև Կոտայքի մարզպետն այցելել է Նոր Արտամետի բուժակ մանկաբարձական կետ, ծանոթացել է շենքային պայմաններին՝ հետաքրքրվելով բնակչությանը մատուցվող ծառայությունների որակով և դեղորայքակախյալ հիվանդներին տրվող դեղամիջոցների ծավալներով:

Այցելության ավարտին Ա. Հարությունյանը ծանոթացել է նաև վերջերս համայնքի միջոցներով կառուցված հանդիսությունների սրահի շենքային պայմաններին: